

Ամեն տարի ապրիլի 13-ին հաջորդող չորեքշաբթի օրը եզդիական համայնքը նշում է Նոր տարին: Եզդիները հավատում են, որ մի քանի հազար տարի առաջ այդ օրը Մալաքե Թաուսն իջել է երկիր և Աստծո պատգամները տվել եզդիներին:

Եզդիական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ, մասիսաբնակ եզդի բարեկամներ, Շնորհավորում եմ ձեզ Նոր տարվա կապակցությամբ:

Ապրելով հայ ժողովրդի հետ կողք-կողքի՝ դուք մեզ հետ կիսել եք մեր ուրախությունը և մեզ հետ անցել դժվարությունների միջով:

Դարերի պատմություն ունեցող մեր բարեկամությունը տարիների ընթացքում էլ ավելի է ամրապնդվել՝ դիմակայելով ամենատարբեր փորձությունների:

Եզդիական համայնքի ներկայացուցիչները, որպես մեզ բախտակից ժողովուրդ, մասնակցել են նաև Արցախյան պատերազմներին և նրանցից շատերն էլ, ցավոք, անմահացան:

Խոնարհումս նրանց հիշատակի առջև:

Այսօր էլ միասին անցնում ենք պայքարի ուղիով, և այսօր էլ Հայաստանի եզդիական համայնքի բազմաթիվ ներկայացուցիչներ պատրաստ են պայքարել մեր երկրի, Արցախի սահմանային անվտանգության համար:

Հայաստանի եզդիական համայնքի հարգելի՛ ներկայացուցիչներ,

Կրկին շնորհավորում եմ ավանդական տոնի առթիվ, մաղթում հարատև բարեկամություն և խաղաղություն:

Թող Մալաքե Թաուսի օրհնությունը պահապան լինի ձեզ: